ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ՝ ՆՐԱ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻ ԵՎ «ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼՈՒ ԱՌԹԻՎ

Սովետական Հայաստանի կառավարության և անձամբ իմ անունից ջերմագին շնորհավորանքներ եմ հղում Ձեզ՝ Ձեր ծննդյան յոթանասունամյակի և կառավարական բարձր պատվի արժանանալու՝ «Ժողովուրդների բարեկամության» շքանշանով պարգևատրվելու առիթով:

Քաջատեղյակ լինելով հայ ժողովրդի հերոսական մաքառումներով և ողբերգական դրվագներով լի բազմադարյան պատմությանը, Դուք ազնիվ գործունեություն եք ծավալել ժողովուրդների բարեկամության և շինարար համագործակցության բնագավառում:

Խաղաղության պաշտպանության օգտին կատարած հայրենասիրական Ձեր աշխատանքով Դուք լայն ճանաչում եք ձեռք բերել և խորին հարգանքի արժանացել մեր ժողովրդի կողմից՝ հայրենի երկրում և նրա սահմաններից դուրս՝ բարի կամեցողության բոլոր մարդկանց շրջանակներում:

Կրկին ողջունելով Ձեզ, մաղթում եմ երկար տարիների քաջառողջ կյանք ու երջանկություն:

Հարգանքներով՝ Ֆ. ՍԱՐԳՍՅԱՆ



ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահության ուղերձի շապիկը